17.11.23 - 17.11.23
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում

Ս.թ. նոյեմբերի 17-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի կունենա տեղեկատվական հանդիպում, որի շրջանակում կներկայացվեն «Երիտասարդ մասնագետների խորհրդարանական ծրագիր-2024»-ի վերաբերյալ մանրամասները:

Ծրագրի շրջանակում Իրավագիտության, Միջազգային հարաբերությունների, Տնտեսագիտության և կառավարման, Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետների մագիստրատուրայի ուսանողները ԱԺ-ում պրակտիկա անցնելու բացառիկ հնարավորություն կստանան:

15 երիտասարդներ ամբողջ Հայաստանից հնարավորություն կունենան ծանոթանալու խորհրդարանական ժողովրդավարությանը, կաշխատեն խմբակցություններում, պատգամավորների գրասենյակներում, մշտական հանձնաժողովներում և Ազգային ժողովի աշխատակազմի վարչություններում:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am